ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Ա. ԱԲՈՎՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբովյան.

Ի պատասխան Ձեր 28.11.2018թ. հ. 01/16Մ գրության՝ տեղեկացվում է.

Քաջազնունու փողոցի հ.9/6 հասցեի նախկին կաթսայատան շենքն իր զբաղեցրած հողամասով հանդիսանում է «Էլքոր դիսթրիբյուշն» ՍՊ ընկերության սեփականությունը: Կաթսայատան տեղում չորսհարկանի հասարակական օբյեկտի կառուցման համար 06.07.2018թ. ընկերությանը տրամադրվել է հ.01/18-07/1-Ա-4540-483 նախագծման թույլտվությունը, իսկ 26.09.2018թ. ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման նպատակով՝ հ.01/18-Ա-6688-77 քանդման թույլտվությունը: Առայժմ կառուցապատողի կողմից նախագիծը համաձայնեցման չի ներկայացվել և, հետևաբար, շինարարության թույլտվություն չի տրամադրվել: Նախագիծը մինչ համաձայնեցումը ենթարկվելու է փորձաքննության, որտեղ դիտարկվելու են նաև Ձեր կողմից ներկայացված գրության մեջ նշված ենթակայանից համապատասխան նորմատիվային հեռավորությունները: Քննարկվող տարածքի հարևանությամբ առկա է խաղահրապարակ, իսկ կաթսայատան տարածքում նոր խաղահրապարակ կազմակերպելն անհնար է, քանի որ այն հանդիսանում է մասնավոր սեփականություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ